Հաշվետու հանդիպում ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «Վերիտաս» նախագծի շրջանակներում

Ապրիլի 8-ին Հյուսիսային համալսարանում ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «Վերիտաս» նախագծի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում ERASMUS+(TEMPUS) ազգային գրասենյակի ներկայացուցիչներ Լանա Կառլովայի և Էդիթ Սողոմանյանի հետ: Հանդիպումը կրում էր մոնիտորինգի բնույթ, քննարկվեցին ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները, ձեռքբերումներն ու խնդիրները: Համալսարանում նախագծի շրջանակներում ձևավորված աշխատանքային խմբի անդամներն ու եվրոպական բուհերում թրեյնինգների մասնակցած բուհի աշխատակիցները ներկայացրեցին իրենց ձեռք բերած արժեքավոր փորձն ու դրանց կիրառությունը համալսարանում իրականացվող ասպիրանտական կրթության բարեփոխումների գործընթացում: Մասնավորապես, համալսարանի գիտահետազոտական աշխատանքների գծով պրոռեկտոր Գրիգորի Ասատրյանի և տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ Արմեն Ճուղուրյանի կողմից ներկայացվեցին ասպիրանտական կրթության կազմակերպման իրավափաստաթղթային ամբողջ բազան, ինչպես նաև Զալցբուրգյան սկզբունքներին համահունչ

ասպիրանտական կրթության պիլոտային ծրագրի իրականացման հետ կապված մտահոգություններն ու խնդիրները: ERASMUS+(TEMPUS) ազգային գրասենյակի ծրագրերի համակարգող Լանա Կառլովայի դիտարկումները վերաբերվում էին կայքի նյութերի բարբերաբար թարմացմանը, Հյուսիսային համալսարանի, որպես կրթության ոլորտի մասնավոր հատվածի ներկայացուցչի՝ նախաձեռնողա-կանության և առավել ակտիվության դրսևորմանը ծրագրի շրջանակներում բարեփոխումների իրականացման գործընթացում: